**ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ>>
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Գրական որոշ ստեղծագործությունների արդիականությունը

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Հեղինակ՝ Անահիտ Գալստյան

Մարզ՝ ք. Երևան

Ուսումնական հաստատություն՝ <<Շահամիր Շահամիրյան>> կրթահամալիր

Բովանդակություն

Ներածություն ……3
Գլուխ 1 – Գ. Սունդուկյանի «Պեպոն»……4-5
Գլուխ 2 – Հ. Թումանյանի ստեղծագործությունների արդիականությունը…5-8
Գլուխ 3 – Ե.Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության արդիականությունը……8-9
Գլուխ 4 - Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի արդիականությունը…10
Գլուխ 5 – Միսաք Մեծարենց բնապաշտը……11-12
Գլուխ 6 – Գրիգոր Զոհրապի «Այրին», «Այինկան»……12-13
Գլուխ 7 – Նար – Դոսի «Ես և նա» պատմվածքը……14
Գլուխ 8 – Մ. Նալբանդյան հեղափոխականը……14-15
Եզրակացություն ……16
Օգտագործված գրականության ցանկ ……17

Ներածություն

...Ի՜նչ նյութ ուզում եք մշակեք, միայն թե
հարազատ լինի ...
Հ. Թումանյան)

Ես ընտրել եմ իմ հետազոտական աշխատանքի համար արդիականության թեման, քանի որ շուրջ քառասուն տարի է դպրոցում եմ՝ շատ լավ հասկանում եմ աշակերտին: Գիտեմ՝ ի՜նչն է նրան հուզում, հետաքրքրում, գիտեմ՝ ե՛րբ է ոգևորվում, տարվում գրականությամբ, խորանում ստեղծագործության վերլուծության մեջ: Նույնիսկ վաղ դարաշրջանի գրական նյութը կարող է այնպես ոգևորել աշակերտին, տրամադրել: Կարևորը՝ ճիշտ մոտեցումն է: Աշակերտները շատ են սիրում համագործակցային մեթոդներ, ուստի շատ դասեր գրականությունից անց եմ կացնում տարբեր մեթոդական հնարքներով: Գրեթե բոլոր դասերին բարձրացնում եմ արդիականության հարցը: Հենց կերպարին որոնում ենք մեր մեջ, համեմատում մեզ հետ և դեպքերը բերում ենք այսօր, աշակերտները խանդավառվում են, սկսում են հետաքրքիր համեմատություններ կատարել և անչափ դիպուկ մտքեր արտահայտել:

Ինչ խոսք, շատ հմուտ ուսուցիչներ արդիականացնում են գրական նյութը:

Փորձեմ ներկայացնել, թե ինչպես եմ իրականացնում ստեղծագործության դեպքերի կամ հերոսի արդիականության խնդիրը:

Գրական որոշ ստեղծագործությունների արդիականությունը» թեմայի նպատակներն են՝

- Լավորել սովորողի մոտ գրական ստեղծագործության արդիականությունը վերծանելու հմտություն,
- արողանալ ընկալել տալ սովորողին, թե ինչու է անհրաժեշտ տվյալ ստեղծագործությունը, ինչ է տալիս տվյալ գործը,
- ույց տալ մեթոդներ, որոնց կիրառությունը նպաստում է հասկանալու ստեղծագործության արդիականությունը

Հետազոտության ընթացք

Գլուխ 1

Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունը, արդիականությունը

Դասարան՝ 8-րդ

Առարկա՝ Գրականություն

Թեմա՝ «Պեպո» կատակերգության արդիականությունը

Դասի տեսակը՝ Ամփոփում

Դասի նպատակները

- Ուսումնասիրել դրամատիկական ժանրը,
- Բացահայտել այսօրվա հետ առնչվող հարցերը վեր հանելու հմտություն,
- Կարողանալ դիմագրավել ֆինանսական խարդավանքներին:

Վերջնարդյունքները

- Վերլուծի ստեղծագործության պատմական շրջանը, միջավայրը,
- Արժևորի մարդկային որակները, մարդու դերը հասարակության մեջ՝ անկախ իր սոցիալական պատկանելիությունից,
- Համեմատի, կապ գտնի այսօրվա հետ, վեր հանի արդիականությունը:

Ընթացքը

Դասարանը բաժանված է խմբերի, որոնք ունեն տարբեր հանձնարարություններ: Խթանման փուլում պատասխանում են՝

խումբը տեղեկացնում է «Պեպո»-ի բեմադրության մասին՝ «Երբ 1871 թ-ին առաջին անգամ բեմադրվեց «Պեպո»-ն, դժվար էր մեր գրականության մեջ ցույց տալ այնպիսի մի գործ, որի մեջ սոցիալական բախումները և հերոսների կերպարները պատկերված լինեին այդպիսի խորությամբ ու գեղարվեստական կատարելությամբ, ապա պարզ է դառնում, որ Սունդուկյանը խոշոր նորարար էր»:
խումբը գրական ժանրի մասին է խոսում:
խումբը տալիս է գլխավոր հերոսի բնութագիրը: Սունդուկյանը գլխավոր հերոսին ընտրել է բուն աշխատավորությունից: Նրա մեջ հեղինակն իր ստեղծագործական ողջ խորությամբ ընդհանրացրել է աշխատավոր մարդուն բնորոշ բնավորության և մտածողության գծերը: Պեպոյի անձնական վիշտը ոչ միայն մեկ անհատի սեփական կենսափորձից ծնված տրամադրությունն է, այլև ողջ աշխատավորության վիշտն ու ցասումը:
խումբը Պեպոյի և Զիմզիմովի պայքարի արդյունքում պետք է հասկանա, ինչպես դիմագրավել ֆինանասական խարդավանքներին:
Կշռադատման փուլում նույն հարցադրումներով քարտեր եմ բաժանում՝

ետ օրերում կա՞ն Պեպոյի նման անհատներ,
յսօր կա՞ն միջոցներ, որոնք օգնում են անհատին ճիշտ կառավարելու եկամուտները,
յսօր ինչպե՞ս տնօրինել ֆինանսական եկամուտները,

յսօր ինչպե՞ս դիմագրավել ֆինանսական խարդավանքներին,
յսօր կա՞ չարի և բարու պայքար:

Տրվում է 15 րոպե: Աշակերտների պատասխաններով վեր են հանվում հուզող հարցեր: Այսօր մարդն ունի՞ վտանգ, որ ֆինանսական խարդավանքի կտրվի: Աշակերտները բերում են շատ օրինակներ, ինչպես են անձնական հաշիվներից միամտաբար գումար կորցրել:

Հաջորդը՝ կանգ ենք առնում մի կարևոր հարցի վրա ևս՝ չարի և բարու պայքար: Բազում օրինակներ բացահայտում են հավերժական այս պայքարի ուժը և նորից հանգում այն եզրակացության, որ բարին հզոր է, գեղեցիկ, կարևոր: Հոգով մաքրվում ենք:

Եվ վերջում՝ բանավոր ելույթ.«Ինչ սովորեցի Պեպոյից, ի՞նչ փոխվեց իմ մեջ»:

Այսպես բացահայտվում է պիեսի խորությունը, արդիականությունը:

Գլուխ 2

Թումանյանի ստեղծագործությունների արդիականությունը

Թումանյանը բազմաթիվ առիթներով կրկնել է, որ բանաստեղծը պետք է իր ժողովրդի սիրտը լինի, նա պետք է մոտ կանգնած լինի իր երկրին, ժողովրդին, ամեն կերպ աշխատի խորոնալ ժողովրդական ստեղծագործության մեջ: Նա գտնում է, որ այս ուղիով միայն գրողը կարող է հասնել համամարդկայնության և տեղ գտնել համաշխարհային գրականության մեջ: Իրականում ամենից առավել, ինքը՝ Թումանյանը եղավ իր այս պահանջմունքին հարազատ բանաստեղծը: Այսօր ապրում են Թումանյանի բոլոր գործերը՝ մեզ հետ են:

.1.«Թմկաբերդի առումը»

Պոեմն անցնում են 8-րդ դասարանում: Ինձ հուզող արդիականության հարցը քննարկում ենք ամփոփման դասին: Պոեմը կարդացել են, պատմել են և վերլուծել են: Ամփոփման դասին հարցը տանելու եմ դեպի արդիականություն:Կազմակերպում եմ կարճ բեմադրություն, այն հատվածը , երբ տիրուհու դավաճանությամբ ամրոցն է առնվում: Մի խումբ աշակերտների նախապես ասել եմ, որ տանը մտածեն մի այնպիսի դիպված, որին հաջորդում է դավաճանությունը: Դիտում ենք երկու բեմադրությունները, մեկը՝ բնագրից, մյուսը՝ մերօրյա մի դեպք է, երբ աշակերտներով որոշում են կայացրել, իսկ մեկը դավաճանում է նրանց /իրականում դավաճան-աշակերտ դժվար է գտնվում/: Աշակերտները հետաքրքրությամբ դիտում են երկրորդ բեմադրությունը: Այնուհետև հաջորդում է դատը՝ ի՞նչպես վարվել դավաճանի հետ: Ամփոփում ենք չարի ու բարու, լավ և վատ արարքների հավերժական հարցերը: Հին մտքեր, որոնք, սակայն մնայուն են բոլոր ժամանակների համար: Հետ ենք գնում պոեմի ակունքներ: Աշակերտները տեսնում են, որ Թումանյանի աշխատանքը ժողովրդական նյութի վրա չափազանց բարդ, հետաքրքիր երևույթ է, բանասիրական, գեղարվեստական և փիլիսոփայական աշխատանք, որի շնորհիվ անկրկնելի հմայքով վերականգնվում են մեր ժողովրդի հինավուրց մտածողությունը, մեր ազգային խառնվածքի կարևոր երանգները, 21-րդ դարի հայ մարդու մտորումները և խոհերը՝ մարդու ազատության և գեղեցիկի մասին: Այլ կերպ ասած՝ Թուման-յանի մշակումը հավերժականի հայտնաբերումն է հնի մեջ, հինը և այսօրը նույնանում են:

.2. Հինն ու նորը «Պատրանք» բանաստեղծության մեջ

Մի առիթով Թումանյանը նկատել է, որ «մտքերն ինքնին արվեստի համար միայն նյութ են, հում նյութ»: Թումանյանը գտնում է, որ հնից եկած հավիտենական մտքերը արվեստի մեջ կարելի է արտահայտել միայն այն պայմանով, որ մի նոր կողմից լուսավորվեն կամ ավելի ազդու երգվեն:

Դժվար չէ նկատել, որ նոր կողմից լուսավորվելու ասպարեզում էական դեր է կատարում հեղինակը՝ իր նորագույն հոգեբանական տեսողությամբ:
Պատրանք» բանաստեղծությունը երեք քառատողից բաղկացած բանաստեղծություն է մանկության օրերից: Պարզ նկարագրություն է, բայց արտաքուստ է պարզ, էությունը խորն է: Ինչպես ամեն մի խոր երևույթ, այս ստեղծագործությունն ունի երեք հատակ՝ պարզից մինչև բարդը, մինչև փիլիսոփայականը: Ամենքս ապրում ենք մեր վերհուշը, անցյալի կենդանացած պատրանքը: Բոլորիս պատում է թախիծը, նույն թախիծը, երբ գնում ենք դեպի մանկություն, ապրում ենք նույն հույզերը՝ անցած-գնացած մարդկանց և երջանիկ օրերի մասին պատմությունը կերտելով:

Ուրեմն, որքան արդիական է «Պատրանք» բանաստեղծությունը:

Ստեփան Զորյանը գրում է, թե որքան շատ տարակույսներ է լսել ընթերցողներից, թե անհասկանալի է, պարզ չէ ի՞նչ է ասում բանաստեղծը, կամ ինչի մասին է խոսքը: Նա պատմում է, որ 20-ական թվականներին այդ տարակույսը հայտնել է իրեն Չարենցը՝ իրենց զրույցներից մեկի ժամանակ: Երբ Զորյանը բացատրել է Չարենցին, թե ինչ կենցաղի հույզ է վերարտադրում Թումանյանը, Չարենցը սկսում է սիրել բանաստեղծությունը, հաճախ է անգիր արտասանում՝ հիացած նրա հուզական խորքով:

.3.«Աղավնու վանքը» ավանդությունը

Հնի, նորի միահյուսման դրսևորումներց մեկն էլ «Աղավնու վանքը» ավանդությունն է: Այս հինավուրց ավանդության զարմանալի մշակումը հարազատ է մեզ, մեր կյանքին, մեր պատմությանը, տանջանքների մեջ անհնարին թվացող փրկության մեր երազներին, մեր ժողովրդի ցավերին, ցավերի մեջ հյուսված հույսերին: Այդպես բովանդակալից և հուզիչ կարող էր գրել միայն Թումանյանը՝ Նա, «ով հասու է իր՝ աղետներ տեսած ժողովրդի հոգեբանությանը ու նրա պատմական ոճին»:

Հենց դրա շնորհիվ է Թումանյանը նյութի մեջ գտնում և ընդգծում հարազատ ինչ-որ բան: Արդյո՞ք Օհանավանքից երկինք բարձրացած, աղավնիներ դարձած հայոց գերիները չե՞ն հիշեցնում հայոց ճակատագիրը 20-րդ դարի սկզբին: Ես գամ մեր դար և.ս, երկինք բարձրացած աղավնիները արդյոք չե՞ն հիշեցնում 44-օրյա մարտի մեր զոհերին՝ անմեղ, ջահել մարտիկներին:

Որքա՜ն արդիական է Թումանյանը:

.4.«Փարվանա» լեգենդը

Այս դասն այլ ձևով եմ անցկացնում 8-րդ դասարանում: Նորից ամփոփման դաս է:

Նպատակը՝

- բացահայտել լեգենդի խորությունը
- կապ հաստատել այսօրվա հետ

Դասի վերջնարդյունք՝

Աշակերտը կընկալի լեգենդի փիլիսոփայական խորությունը և արդիականությունը:

Ընթացքը՝

ենի դիագրամով համեմատություն են անցկացնում աշակերտները Փարվանա արքայադստեր և Թըմկա տիրուհու միջև
արցաշարի միջոցով քննարկում են լեգենդը, իմաստը,

անգամանորեն ուսումնասիրում են լեգենդի ավարտը:

Մեկնաբանենք՝ ինչու՞լեգենդի ավարտն այսպես եղավ:

Ուսուցիչը խորացնում է աշակերտների գիտելիքները, որ իրապես ընկալեն այս երկի փիլիսոփայական խորությունը:

Փորձենք Թումանյան մեծությանն այլ կերպ բացահայտել:

Ոչ էական թվացող մի հերոս ծերունի հայրը շատ բան է խտացնում իր մեջ: Նա շարունակ աղջկան հույս է տալիս, թե կտրիճները կգան, սակայն տարին տարվա վրա աղջիկն սկսում է իմաստնանալ, փորձառու դառնալ և կասկածել, թե՞ արդյոք տղաները հետ են գալու: Ծերունին լռում է՝ նա հարուստ կենսափորձ ունի, գիտի, որ ողջ կյանքը մի երկար սպասում է, որ ոչ բոլոր երազանքներն են իրականանում: Անշեջ հրի սիմվոլը մարդկային հոգու բարձր երազն է:

Է:

Հիշենք, Նիցշեն ասում էր՝ «Երանի նրանց, որ դեռ զարթնած չեն, վա՛յ զարթնածին»: Ահա այդ Փիլիսոփա Նիցշեի խոսքով ասած, աղջիկը «զարթնել է», անիմաստ է գտնում երազանք-պատրանքը: Սա հոգևոր վիճակ է, երբ իմաստազուրկ է ամեն ինչ, սա զարթնածի հոգեբանություն պատճառով էլ աղջիկը մահացավ: Սա արտաքուստ է միայն սովորական պատմություն, իսկ ինչպե՞ս բնութագրենք կտրիճներին, որոնք այրվեցին կրակներում:

Թումանյանը հակադրում է՝ սպասող, երազանքով, պատրանքով ապրող / իրական, կյանքը ապրող: Տղաների՝ անշեջ հրի փնտրտուքը, ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ հենց ամբողջ կյանքը: Երազն ու ձգտումը սրտում՝ ամեն մարդ ընկնում է, բարձրանում, հուսահատվում, գոտեպնդվում, տառապում, հրճվում՝ ապրում է:

Տղաները ողջ կյանքում որոնեցին իրենց երջանկությունը: Նրանք պարզապես ապրեցին մեզ նման, նրանք սովորական մահկանացու են՝ չհասած Նիցշեի «զարթնած» վիճակին:

Այսպես բացահայտվում է լեգենդի փիլիսոփայական խորությունը, բխում է լեգենդի արդիականությունը՝ ծնվել, ապրել, գնալ նպատակի հետևից…..ավարտել կյանքը: Կարծում եմ՝ այս բացատրությամբ աշակերտը կընկալի երկի խորքը:

Գլուխ 3

Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության արդիականությունը

Դասարան՝ 7-րդ

Թեմա՝ Եղիշե Չարենցի բերած նորությունները

Դասի տեսակը՝ դասախոսություն

Կենսագրության հետ, հուշերից հետո անդրադառնում եմ բանաստեղծի նորարարություններին: Աշակերտը պիտի իմանա, որ Չարենցը գրելու մեծ կուլտուրա է ունեցել: Ըստ հուշագիր Շողենցի՝ Չարենցը տվել է տաղաչափական դասեր: Չարենցն ասել է, որ բանաստեղծը տաղաչափությունը ոչ մի որպե չպետք է մոռանա: «Միտքը

չափածո ստեղծագործության իրանն է, տաղաչափությունը՝ թևերը»: Չարենցի ստեղծած նոր ռիթմական նրբերանգները օգտագործում են ժամանակակից բանաստեղծները: Պ. Սևակը գրել է. «1500 տարվա ճանապարհ անցած մեր տաղաչափության մեջ նորություն բերելը համարյա անհնարին մի գործ էր, իսկ Չարենցի բերած նորությունները շատ էին այնքան, որ ստիպեցին Մ. Աբեղյանի նման մեկին հատուկ ուսումնասիրություն գրել այդ մասին»: Չարենցը խորացրեց նաև ազատ ոտանավորի ձևը:

.1.«Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը, նրա արդիականությունը

Դասարան՝ 7-րդ

Նպատակը՝

- Ուսումնասիրել բանաստեղծությունը,
- Պարզել բարդ մտքերի իմաստը,
- Կապ հաստատել այսօրվա հետ:

Վերջնարդյունքները՝

- Կկարողանա՞ ասմունքել բանաստեղծությունը,
- Բանաստեղծության միտքը կկապի՞ իրականության տարբեր երևույթների հետ,
- Կբացահայտի՞ բանաստեղծության արդիականությունը:

Ընթացքը՝

- Խթանման փուլում հանձնարարում եմ աշակերտներին նշել իրենց համար կարևոր երեք բանի անուն,
- Բացատրում ենք, թե Չարենցի համար ի՞նչն է առավել թանկ այս աշխարհում, Ընթերցում եմ բանաստեղծությունը, կամ լսում ենք Խ. Աբրահամյանի ասմունքը,
- Դասարանը բաժանում ենք խմբերի, յուրաքանչյուր խումբ պիտի բացատրի իրենց խմբին բաժին հասած քառատողը
- Ցույց եմ տալիս իմ պատրաստած պաստառը, օգնում եմ ճիշտ վերլուծելու բանաստեղծությունը:

Կշռադատում՝Բաժանում եմ բառաբաժան աղյուսակը, որը պետք է լրացնեն զույգերով.

՞նչ զգացմունքներ առաջացան	անաստեղծության, ո՞ր տողը վերնագիր կդարձնեիր
Սարոյանը այս տաղը համեմատում էր «Հայր մեր»-ի հետ, Մ. Սարյանը՝ էպոսի, իսկ դու ինչի՞ հետ կհամեմատեիր	նչո՞վ է արդիական բանաստեղծությունը

- Լսում եմ աշակերտների կարծիքները, հիմնավորում ենք բանաստեղծության արդիականության մի քանի կարևոր կետեր: Արդիական են.

  եզ՝ հայերիս, ի վերուստ է տրված եղել այդպիսի աշխարհագրական գիրք և ճակատագիր, պատմությունը կրկնվում է, հայն իր ողջ գիտակից կյանքում տեսել է և տեսնում է կորստի ցավը,

արենցը նշում է, որ Հայաստանը որբ է ու արնավառ, դրա ապացույցն են մեր այս պատմական օրերը,
ասիսը անհաս փառքի ճամփա է, ցավոք առ այսօր:

Գլուխ 4

Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի արդիականությունը

Դասարան՝ 7-րդ

Նպատակը՝

- Ուսումնասիրել պատմվածքը,
- Բացահայտել կերպարների հատկանիշները,
- Կապ հաստատել այսօրվա հետ:

Վերջնարդյունքները՝

- Կկարդան պատմվածքը,
- Կիմանան պատմական իրադարձությունները:

Ընթացքը՝

- Այս պատմվածքի արդիականությունը բացահայտվում է «Կրկնակի գրառումնե-րի օրագիր» մեթոդով,
- Աշակերտը յուրաքանչյուր հատված համեմատում է իր հետ.
  աճի աղան անխնամ չէր փոխել քայլերը / ես……..
  աճի աղան հուզված ու դժկամ ձեռքով արավ, որ սուրճը տանեն / ես էլ……..
  ոան ոչ ոք չէր նկատում / ինձ էլ……..
  Երբ կերպարներն անընդհատ համեմատական ձևով են տարվում, ինքնըստինքյան արդիականության հարցը քննարկվում է:
- Հարցեր, որով շարունակվում է պատմվածքի արդիականության գաղափարը.
  - Այսօր կա՞ գաղթականություն,
  - Կա՞ն Հաճի աղայի նման մարդիկ այսօր,
  - Ինչպե՞ս կդատեք նրանց:
- Հանձնարարում եմ պատմել դեպք վերջերս կայացած, երբ մարդ ճարահատյալ պիտի թողնի իր տունն ու հեռանա: Այսպիսով, պատմվածքը թեև ռուս-թուրքական պատերազմի ժամանակաշրջանին է վերաբերվում, բայց թեման արդիական է, այս օրերին ևս մարդիկ այդ դժվար ու տհաճ զգացողությունն ապրեցին. լքել հարազատ տունը: Նրանք մեր կողքին են, շատերն իմ աշակերտների ազգական-բարեկամներից են: Պատմում են, թե ինչպես են մի քանի իրեր վերցրել ու եկել, թե ինչքան ցավով են պատմում իրենց տան, ունեցված-

քի, հարազատ միջավայրի մասին: Ուրեմն, ցավը նույնն է, ժամանակներն են տարբեր: Վերջում վեր ենք հանում մի նախադասություն, որ կարելի է մտքերի կիզակետ համարել և հնչեցնել այսօր. «Աստծու առաջ հավասար են բոլորը, ավելորդ չկա»:

Գլուխ 5

Միսաք Մեծարենց բնապաշտը

Միսաք Մեծարենց…..Արտաքուստ թվում է, ամենազուլալ բանաստեղծն է, բայց ներքուստ ունի մի աշխարհ՝ անսպասելի ելևէջներով: Նույնիսկ Չարենցն է նկատել նրան և տվել հետաքրքիր մի բնորոշում՝ բնության անաղարտ երգիչ: Բնությունը Մեծարենցի բանաստեղծական խառնվածքի կարևոր մասերից էր: Շատ բանաստեղծներ են բնապաշտ: Յուրաքանչյուրի մոտ յուրովի դեր է ստանում բնությունը: Օրինակ՝ Հ. Թումանյանը դիմել է բնությանը, երբ հոգեկան խոր անկում է ապրել: Բնությունը մերթ երևան է գալիս որպես ներդաշնակության օրինակ, մերթ՝ դառնացած հոգու ապաստարան: բոլոր դեպքերում մարդուն ձգում է բնությունը:

Մենք բոլորս սիրում ենք բնությունը: Բնությունը փոխում է մարդու տրամադրությունը, սփոփում է: Մեր զգացողությունները, որ այսօր ենք ապրում, ներկայացրել է Միսաք Մեծարենցը: Մենք նայում ենք բնությանը, հիանում ենք գեղեցիկ ծառերով, թռչունների դայլայլով…..

Ոչ ոք այնպես նրբին չի դիտել բնության խորհրդավոր շարժումն ու գեղեցկությունները, ինչպես բանաստեղծները, որոնց թվում և Միսաք Մեծարենցը:

Ի՞նչն է զարմանալին: Բանաստեղծը ոչ միայն բնությունն զգալու ձիրք, այլ նաև բանաձևում է բնության ու մարդու խոր կապը: Ի՞նչու պիտի բնության երգը այդպես լավ ստացվեր հենց Մեծարենցի մոտ: Երբ կարդացի հուշերը Մեծարենցի մասին, ամեն ինչ պարզ դարձավ:

Մեծարենցը արտակարգ սեր է ունեցել մի քանի կենդանիների հանդեպ, հետաքրքրվել է նրանցով, իմացել է նրանց հետ զբաղվելու լեզուն: Սիրել է գորտերին, նրանց ձայնը, խորը ուսումնասիրել է նրանց կենցաղը: Մեծարենցը հիացել է ավանա-կի համբերատարությամբ: Ասում են՝ նա խենթացել է մանավանդ ավանակի աչքերից ու նայվածքից:

Մեծարենցը շատ է սիրել գույնզգույն ծաղիկներ, խոտ: Սիրում էր շոյել ծաղիկներին և զրուցել նրանց հետ:

Մտերիմ ընկերներից մեկը պատմում է, որ մի օր դաշտով գնալիս են եղել ինքն ու Մեծարենցը: Հանկարծ մի ցանկապատի մոտ Մեծարենցը մի փոքրիկ ծաղիկ է տեսնում, մոտենում է և հարցնում.

այրի՛ ծաղիկ, անունդ ի՞նչ է:

Իսկ քիչ հետո ծնվում է նրա «Անանունը»:

.1.Մ. Մեծարենցի «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծությունը

Մինչ աշակերտներին պիտի ծանոթացնեմ Մեծարենցի «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծությանը, նրանց հրավիրում եմ դուրս: Մենք քայլում ենք Արզումանյան փողոցով, որի երկայնքով ձգվում են ակացիայի ծառերը: Շնչում են հաճելի բույրը, տեսնում են քամուց թափվող ծաղիկները: Փորձում են զգացած ապրումները ներկայացնել: Հետո ընթերցում են Մեծարենցի բանաստեղծությունը: Բացատրում են բնության, լույսի, ջրի խաղը: Փորձենք վեր հանել՝ ի՞նչն է արդիական այս բանաստեղծության մեջ: Ահա հետաքրքիր որոշ պատասխաններ.

ա) Իրիկվա հովը տարածում է ակացիայի բուրմունքը,

բ) Երեկոյան անդորրը երազող է դարձնում բոլորիս,

գ) Վայելում ենք հրաշք երեկոն, Մեծարենցը բացել է մեր աչքերը, անձնավորված բնությունը մեզ իր խորհրդավոր աշխարհն է տանում,

դ) Մենք տեսնում ենք մի գեղեցկություն մեծ բանաստեղծի շնորհիվ, շատրվանի ջրերի վրա իջնող ծաղկալույսը դառնում է փերի:

Այսպիսով, մենք վայելում ենք լույսերի, ջրերի, հովերի խաղը, որը հավերժ է:

Իր ժամանակին զգացել է բնապաշտ Մեծարենցը, նրա շնորհիվ այսօր մենք ենք վայելում հրաշք իրիկնաժամը:

Գլուխ 6

Գրիգոր Զոհրապի «Այրին» նովելը

Նովելն ուսումնասիրում ենք 8-րդ դասարանում: Նովելը կարդալուց, բացատրելուց, պատմելուց հետո մեկ ամբողջ դասաժամ նվիրում եմ բանավեճի: Բանավեճի թեմաներն են «Պանդխտությունը», «Կանանց հոգեբանությունը»:

Բանավեճը որոկյալ լինելու համար պիտի վերհիշել Զոհրապի մասին կարևոր մտքերը: Զոհրապը իրապաշտ շարժման առաջնորդներից էր և դեպի ժողովուրդը՝ մտայնության քարոզիչ:

Հնչեցվում են հարցերը.

- Ի՞նչ դեր էր հատկացնում գրականության հանրայինին ժողովրդական կյանքում:
- Ի՞նչու են Զոհրապին համարել հոգեբանական նրբությունների արձակագիր:
- Ի՞նչու էին մեկնում պանդխտության:
- Այսօր գնո՞ւմ են պանդխտության:
- Ո՞րն է տարբերությունը:
- Հիմա ի՞նչու են գնում պանդխտության:
- Ինչպե՞ս է անդրադառնում պանդխտությունը ընտանիքի անդամների վրա:

Բերել պանդխտության օրինակներ: Պատմել այդ ընտանիքների մասին, ինչպե՞ս են սպասում հայրիկին երեխաները, կարոտի զգացումը.

- Կա՞ն այսօր Մարտիրոսի նման մարդիկ:
- Ի՞նչն է ստիպում մարդկանց այսօր գնալ պանդխտության:

Բոլոր պատասխաններից ստեղծվում է մի եզրահանգում.« Սոցիալական ոչ բարվոք վիճակն է, որ բոլոր ժամանակներում ստիպել է տան տղամարդուն մեկնելու պանդխտության: Պանդխտությունը խարխլել է և խարխլում է շատ ընտանիքներ, հասցնում կործանման»:

Բանավեճի մյուս թեման է «Կանանց հոգեբանությունը».

Սովորողները գիտեն, որ Զոհրապի նորավեպերի մեծ մասը նվիրված է կանանց և սիրո հարցերին:

ա պատահակա՞ն է:

՛չ, իր նորավեպերում գրողը նկարագրել է ժամանակակից կյանքն իր բոլոր ստվերոտ կողմերով:

՞ր կանանց ճակատագիրն է առավել հուզել Զոհրապին:

Զոհրապին հատկապես հուզել է աշխատավոր կանանց ծանր վիճակը և ողբերգական ճակատագիրը: Զոհրապը դառնում է նրանց պաշտպանը, խոսում է նրանց մասին ջերմությամբ, կարեկցանքով, թախիծով:

նչպիսի՞ն էր Զարդարը:

ա հեզ, լուռ, աշխատասեր կին էր:

նչպե՞ս էր տանում իր ծանր վիճակը:

ռանց տրտնջալու տանում է պանդուխտի կնոջ ծանր կյանքը:

՞նչու է բացահայտել Զոհրապի գավառի թշվառ կանանց:

ոհրապը գտնում է, որ նրանք իրավունք ունեն լինելու երջանիկ, սիրված:
ա՞ն այսօր Զարդարի նման տուժած կանայք:
արո՞ղ եք բերել օրինակներ:
նչպե՞ս են ապրում նրանք:

Պարզվում է, որ այսօր էլ կան Զարդարի նման իրավազուրկ, տանջված, ծանր կյանքով ապրող կանայք:

.1.Գրիգոր Զոհրապի «Այինկա» նովելը

Նորից բանավեճ է: Այս անգամ թեմաներ չենք առանձնացնում: Սկսում եմ հարցադրումներով:

՞րն է երկրի թեման:
նչպիսի՞ն է հեղինակի վերաբերմունքը:
՞րոնք են բախումները:
երպարներն ովքե՞ր են:

Աշակերտները պատասխանում են, որ «Այինկա»-ն թեմատիկ առումով սիրո պատկեր է, նաև՝ ժողովրդի կենսապայքարի արտացոլք: Հեղինակը առանձնահատուկ բավականությամբ է պատկերել մարդկանց ըմբոստությունը: Ծխախոտի մաքսանենգությամբ զբաղվելը ոչ միայն ապրուստ հայթայթելու, այլ տիրող բռնակալ իրավակարգին հակադրվելու միջոց է:
Կա՞ն այսօր մաքսանենգությամբ զբաղվող մարդիկ:
Ի՞նչ վախճան են ունենում նրանք:

Սովորողը գիտի, որ այսօր ևս կան մաքսանենգությամբ զբաղվող մարդիկ, գրեթե բոլորը նույն վախճանն են ունենում:

Հետո անդրադառնում ենք հոգեբան Զոհրապին հուզող կարևոր հարցին՝ կնոջ թեմային: Փորձում են բացահայտել Պերճուհուն:

՞նչու Պերճուհին նշանը հետ տվեց:
ո՞րն է Պերճուհու հոգին:
նչպի՞սին է նա:
ա՞ն այսօր Պերճուհու նման աղջիկներ:
րանք և՞ս այդպես կվարվեին:

Պարզում են, որ Պերճուհու նման կվարվեն խորունկ հույզեր, ճշմարիտ զգացմունքներ, սիրո մեծ ուժ ունեցող կանայք: Իսկական մաքուր սերն այն է, որով առաջնորդվեց Պերճուհին:

Գլուխ 7

Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքը

Սովորողի սիրելի դասերից մեկը Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքն է: Այս գեղեցիկ պատմվածքը անց եմ կացնում Էսսեի մեթոդով: Սովորողները գրում են շարադրություն «Սոցիալական անհավասարությունը կարող է ընտանիք ստեղծելու խոչընդոտ լինել» խորագրով:

Շարադրությունների ընթերցումներով բարձրացնում ենք արդիական հարցադրումներ:

անդիպե՞լ եք կյանքում նման դեպքերի:

Շատ հետաքրքիր դիտարկումներ ենք լսում, վեր հանում:

Պարզվում է, որ շատ են այսօր էլ նման դեպքերը, ամուսնությունները մեծ մասամբ նույն խավի մարդկանց կապն է: Սա սովորողի կարծիքն է: Հնչում են նաև այլ կարծիքներ: Մեծահարուստն ամուսնացել է անապահով ընտանիքի աղջկա հետ և երջանիկ ընտանիք են կազմել:

Հաջորդ դասը հարց ու պատասխան է՝ ուժեղ և թույլ կամքի մասին:

Շատ են Նա-ի կողմնակիցները: Նա-ի կերպարը ոգևորում է սովորողներին, ուժեղ է, նպատակասլաց, մեծ կամքի տեր է:

Չեմ փորձում պատմվածքում գտնել ճիշտը, կամ սխալը, քանի որ իրական կյանքում էլ շատ են նման դեպքերը, խոսքն այստեղ մարդու կամքի մասին է:

Սովորողը համոզվում է, որ ամեն մարդ ունի իր կամքն ու տեսակետները, իր ուժը՝ պայքարելու կյանքի դժվարությունների դեմ: Մարդ արարածը տարբերվում է մյուսներից իր ներաշխարհով, որը մարդուն դարձնում է ունիվերսալ:

Պատմվածքից դաս են քաղում սովորողները՝ հերոսների անձնական կյանքից:

Գլուխ 8

Միքայել Նալբանդյան՝ հեղափոխական, հրապարակախոս, գրող և մանկավարժ:

Այս մեծ մարդու մտքերը թեև XIX դարում են ասվել, բայց շատ արդիական են հենց այսօրվա համար: Ուսումնասիրել եմ մեծ մանկավարժի շատ գործեր, ասված շատ մտքեր և հիմա ուզում եմ նշել, որով և պարզ է դառնում, թե որքան հեռատես, զարգացած է եղել մեծ հրապարակախոսը, որքան բան կարելի է վերցնել նրա ասույթներից, կիրառել դպրոցում: Գրեթե բոլոր գործերում Նալբանդյանը հանդես է գալիս, որպես լուսավորիչ՝ ժողովրդի ազատագրության գործում գերագնահատելով լուսավորության դերը:

Հետաքրքիր է նրա փիլիսոփայական մտքերից մեկը.«Բնությունը դադար չունի, նա գտնվում է անդադար շարժողության մեջ, որ է նորա կյանքը»: Նալբանդյանը ընկալում է շարժման օրենքներն ու օրինաչափությունները, հատկապես հանգում է այն գաղափարին, որ «զարգացման վերին աստիճանը իր ձևով նման է նորա սկզբին»: Նա գիտակցում է, որ հասարակությունը կանգնած չի մնում, անընդհատ շարժվում է և այդ շարժումն է, որ զարգացման վերին աստիճանը պետք է հանգեցնի ձևական նմանության սկզբի հետ՝ ազատության:

Խիստ կարևոր էՆալբանդյանի կարծիքը կրթության մասին:

Ըստ Նալբանդյանի՝ դաստիարակության հարցում կարևոր է մայրենի լեզվի տիրապետումը: Քանի որ լեզուն ազգի պահպանման գլխավոր կռվանն է, ուստի մայրենի լեզվով ուսուցումը կնպաստի ժողովրդի հարատևման գործին: Օտար լեզվով տրված կրթության ազդեցության տակ մարդը «կփոխե յուր բուն հատկությունքը», որպես ազգի անդամ կվերանա: Եթե դպրոցը «մի մեքենա է հայի զավակի մեջ օտարություն պատվաստելու, լավ է մանուկները տգետ հայ մնալ, քան թե դառնալ թերակիրթ չհայ»: Եվ քանի որ ժողովրդայնությունը պահանջում է, որ դպրոցը լինի ազգային, ուրեմն առաջին տեղում պիտի լինի մայրենի լեզուն:

Որքա՜ն արդիական են հնչում այս խոսքերը, նույնը կարող ենք ասել այսօրվա համար:

Նույնպես արդիական են Նալբանդյանի մտքերն անձի համակողմանի զարգացման գործում: Նալբանդյանը պահանջում է «տիեզերական կրթություն տալ ազգի զավակներին»: Նա գտնում է, որ սովորողը պիտի իմանա իր մայրենի լեզվից հետո ուրիշ օտար լեզուներ, ընդհանուր պատմություն, աշխարհագրություն, օրենսդրություն, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, վայելչագրություն, նկարչություն: Նալբանդյանը

գտնում է, որ ուսուցման մեջ ամենակարևորը գիտակցականությունն է: «Հասկանալը առաջին քայլն է,- գրում է նա,- ամենակարևորը ուսումնական աշխատանքում»:

Չհասկացված նյութը համեմատում է չմարսված սննդի հետ: Որքան ճիշտ և արդիական է Նալբանդյանի միտքը լավ ուսուցչի մասին: Պիտի տալ գիտելիք, բայց սովորողը չպիտի մնա միայն տեղեկություններով լցված, դրանից օգուտ չկա, հարկավոր է, որ նա ունենա իր սեփական մտքերը, սեփական գործունեությունը: Այսօր մենք որքան տեղ ենք տակիս աշակերտների ինքնուրույն դատողություններին:

Շատ ռեալ են նաև Նալբանդյանի մտքերն ուսուցման ձևի մասին: Նա դեմ է եղել խստավարությանը, ինչպես և ավելորդ քնքշությանը: Երեխաներիմ ոչ մտրակն է օգնում, ոչ՝ փաղաքշանքը: «Այդ բաներն այնպիսի թունավոր տարերք են, որ մտնելով դաստիարակության մեջ, կտրում են նորա ընթացքը»:

Արդիական է նաև Նալբանդյանի այն գաղափարը, որ դպրոցը պիտի նախապատրաստի իր սաներին արհեստագործական, երկրագործական աշխատանքի: Նույնքան արդիական են Նալբանդյանի մտքերը գիտության մասին:
Բանն այն է, որ գիտությունը նպաստի մարդու կենցաղը՝ իր տունն ու բունը բարելավելուն»,- գրում է նա:

Նալբանդյանը մեծ տեղ է տվել համակողմանի զարգացմանը, ինչն այսօր ևս չափազանց կարևոր է:

Եզրակացություն

Գրականության դասերը կարևոր է անցկացնել ինտերակտիվ մեթոդներով: Տարբեր մեթոդներ կիրառելով կարողանում ենք հասնել նրան, որ սովորողը հետաքրքրվի գրականությամբ, ակտիվ լինի: Կիրառել եմ տարբեր մեթոդներ, որ սովորողներին ավելի հասնելի լինի գրական նյութը: Շատ եմ կիրառել արդիական հարցադրումներ, քանի որ հարցերի միջոցով բացահայտվում է գրական երկի խորությունը, արժեքը, վեր է հանվում արդիականությունը: Կիրառել եմ զրույցի, բանավեճի, շարադրանքի մեթոդներ: Դասեր կան բեմադրությամբ եմ ներկայացրել: Տեղ է գտել նաև զբոսանքը: Կարևորել եմ նաև դասախոսությունը:

Լինի բանավեճ, խմբային աշխատանք, թե՞ անհատական զեկուցում, կարևորը գրական ստեղծագործության խոր ուսումնասիրությունն է, գրական երկի ընթերցանության խթանումը: Աշակերտին խոսք տալը նպաստում է նրա բանավոր խոսքի զարգացմանը, հետաքրքիր ու նոր մտքեր արտահայտելուն: Կարևորել եմ և՛բանավոր, և՛ գրավոր խոսքը սովորողի:

Կարծում եմ, առաջադրածս մեթոդներն ու ձևերը կնպաստեն սովորողների զարգանալուն, գրականությունը սիրելուն, գիրք կարդալուն:

Գրականության ցանկ

.Մկրյան «Երկեր»
րանտ Թամրազյան «Բանաստեղծության հազարամյա խորհուրդը»
տ. Զորյան «Իմ Թումանյանը»
Շարուրյան «Միսաք Մեծարենցը ժամանակակիցների հուշերում»